



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2022 թվականի թիվ 211-Ա

ԹԻՎ ՀԳ-00047/22 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հունիսի 7-ի նիստում, քննարկելով թիվ ՀԳ-00047/22 վարույթը կարճելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 8-ին ««Կառու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 44-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 44-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00047/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 26-ի «Թիվ ՀԳ-00047/22 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 162-Ա որոշմամբ վարույթի ժամկետը 2022 թվականի մայիսի 8-ից եռամսյա ժամկետով երկարաձգվել է:

«Կառու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) թիվ 44-Ա որոշումն ստացել է 2022 թվականի փետրվարի 28-ին և 2022 թվականի մայիսի 10-ին Հանձնաժողով է ներկայացրել «Դիմում» վերտառությամբ փաստաթուղթ:

2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.

Վարույթը հարուցվել է Հանձնաժողովի լիազորությունների իրականացման ընթացքում Ընկերության կողմից առանց ջրօգտագործման թույլտվության և աղբյուրի ջրի ձեռքբերման «Ջուր Բյուրական աղբյուրի շրջակայում» և «Ջուր Բյուրական աղբյուրի շրջակայում սպորտ» շրջակայում ոչ գազավորված ջրեր արտադրելու և իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ առերևույթ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներով:

3. Ընկերության դիրքորոշումը.

Ընկերությունը 2022 թվականի մայիսի 10-ին ներկայացրած դիմումով (այսուհետ նաև՝ **Դիմում**) հայտնել է, որ Ընկերությունը երբևէ չի արտադրել «Աղբյուրի ջուր» բառերով մականշված ապրանքներ: Ընկերությունը 2020-2021 թվականներին արտադրել և վաճառել է «Byuraqua» անվանումով մաքուր խմելու ջուր: Միաժամանակ, Ընկերությունը չի բացառել Ընկերության հաշվապահության կողմից թույլ տրված վրիպակի արդյունքում հաշվապահական փաստաթղթերում ապրանքի անվանումը սխալմամբ «Աղբյուրի ջուր» նշված լինելու հանգամանքը:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և սրացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

1) Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ԳԳ-3061 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-3061 գրություն**) դիմել է Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ **ՊԵԿ**)՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում «հանքային ջրեր և չքաղցրացրած, չբուրավետացված գազավորված խմիչքներ» (ԱԴԳՏ 11.07.11) ապրանքային խմբին դասվող ապրանքների արտադրություն և «ջրեր, բնական կամ արհեստական հանքային ջուր և ըմպելիք (առանց շաքարի)» (ԱՏԳ ԱԱ 2201) ապրանքային խմբին դասվող ապրանքների ներմուծում իրականացրած տնտեսավարող սուբյեկտների ցանկը (անվանումը, կազմակերպատիրական ձևը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական հասցեն, գործունեության վայրը և այլն), ինչպես նաև վերջիններիս կողմից նույն ժամանակահատվածում բնական խմելու ջրի և մանկական սննդի համար նախատեսված խմելու ջրի իրացման ծավալների, իսկ անհնարինության դեպքում դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն:

ՊԵԿ-ը, ի պատասխան թիվ ԳԳ-3061 գրության, 2021 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 01/71-6/82963 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 01/71-6/82963 գրություն**) Հանձնաժողովին է տրամադրել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում ԱԴԳՏ 11.07.11 և ԱՏԳ ԱԱ 2201 ապրանքային խմբերին դասվող ապրանքների ներմուծում և արտադրություն իրականացրած տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս կողմից դուրս գրած հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 2022 թվականի հունվարի 12-ի գրությամբ Հանձնաժողովին է տրամադրել նույն ժամանակահատվածում ԱԴԳՏ 11.07.11 և ԱՏԳ ԱԱ 2201 ապրանքային խմբերին դասվող ապրանքների արտադրություն և ներմուծում իրականացրած տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս կողմից ՀԴՄ կտրոնների միջոցով կատարած գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված՝ վերը նշված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում իրացրել է

ապրանքներ:

2) Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի փետրվարի 11-ի թիվ ԳԳ-279 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-279 գրություն**) Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն.

1. «Կառույ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 և 2021 թվականների տարեկան հասույթի չափերի վերաբերյալ՝ ըստ տարիների,

2. 2021 թվականի ընթացքում Ընկերության կողմից «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված» և «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված սպորտ» մակնշմամբ ապրանքների, ինչպես նաև «աղբյուրի ջուր» մակնշմամբ այլ ջրերի իրացումից ստացված հասույթի չափերի վերաբերյալ՝ առանձնացված ըստ ապրանքների, իսկ անհնարինության դեպքում դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների վերաբերյալ:

ՊԵԿ-ը, ի պատասխան թիվ ԳԳ-279 գրության, 2022 թվականի փետրվարի 14-ին տրամադրել է թիվ ԳԳ-279 գրության 1-ին կետով պահանջված տեղեկատվությունը, միաժամանակ հայտնել է, որ ապրանքների մատակարարման կամ ձեռքբերման դեպքում դուրս գրվող հարկային հաշիվներում և հաշիվ վավերագրերում ՀՀ հարկային օրենսդրությունը չի նախատեսում ապրանքային դիրքի լրացման պահանջ: Նշված հաշվարկային փաստաթղթերում ապրանքի անվանումը լրացվում է կամայական ձևով և ոչ միշտ է հնարավոր նույնականացնել ըստ ապրանքախմբերի: ՊԵԿ-ը տրամադրել է Ընկերության կողմից 2021 թվականին դուրս գրված հարկային հաշիվների, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2201 դասակարգչով ՀԴՄ կտրոնների միջոցով գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը, որի համաձայն՝ 2021 թվականին Ընկերությունն իրացրել է «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված» և «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված սպորտ» ապրանքներ:

3) Դիմումին կից Ընկերությունը ներկայացրել է «BYURAQUA» [Բյուրաքվա] անվանումով ջրի երկու դատարկ շիշ՝ 0,33լ և 1լ տարողություններով: Նշված շշերի պիտակների վրա առկա է հետևյալ տեղեկատվությունը. «Մաքուր խմելու ջուր, լեռ Արագած, 4090մ, շալցված է՝ Արագածոտնի մարզ, համայնք Բյուրական»: Պիտակներին նշված է ամսաթիվ, համապատասխանաբար «23 jun 2021» և «03 sep 2021», նշված է նաև արտադրող ընկերությունը, բաղադրությունը, պահպանման պայմանները, ժամկետը:

5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.

1. Ընկերությունը 2021 թվականին դուրս գրած հաշվարկային փաստաթղթերում որպես մատակարարվող ապրանք նշել է «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված» և «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված սպորտ»:

2. Ընկերությունը հայտնել է, որ երբևէ չի արտադրել «Աղբյուրի ջուր» բառերով մակնշված ապրանքներ, 2020-2021 թվականներին արտադրել և վաճառել է «Byuraqua» անվանումով մաքուր խմելու ջուր:

3. «BYURAQUA» [Բյուրաքվա] անվանումով ջրի շշերի պիտակների վրա առկա է հետևյալ տեղեկատվությունը. «Մաքուր խմելու ջուր, լեռ Արագած, 4090մ, շալցված է՝

Արագածոտնի մարզ, համայնք Բյուրական»: Պիտակներին նշված է ամսաթիվ, համապատասխանաբար «23 jun 2021» և «03 sep 2021», նշված է նաև արտադրող ընկերությունը, բաղադրությունը, պահպանման պայմանները, ժամկետը:

6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Օրենքի 16-24-րդ հոդվածներում նկարագրված իրավախախտումների հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Սույն գործով վարույթը հարուցվել է Ընկերության կողմից «աղբյուրի ջուր» մակնշումով շալցված խմելու ջուր, մասնավորապես, «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված» և «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված սպորտ» ապրանքներ արտադրելու և իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ առերևույթ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներով, ընդ որում Վարույթի հարուցման փուլում այդպիսի տեղեկատվություն ստացվել է Ընկերության կողմից ՊԵԿ ներկայացրած հաշվարկային փաստաթղթերի ուսումնասիրությունից:

Վարույթի շրջանակներում Ընկերությունը հայտնել է, որ երբևէ չի արտադրել «Աղբյուրի ջուր» բառերով մակնշված ապրանքներ, 2020-2021 թվականներին արտադրել և վաճառել է «Byuraqua» անվանումով մաքուր խմելու ջուր, ի հիմնավորումն որի ներկայացրել է «Մաքուր խմելու ջուր, լեռ Արագած, 4090մ, շալցված է՝ Արագածոտնի մարզ, համայնք Բյուրական» բովանդակությամբ պիտակով «BYURAQUA» [Բյուրաքվա] անվանումով ջրի երկու դատարկ շիշ՝ 0,33լ և 1լ տարողություններով, համապատասխանաբար «23 jun 2021» և «03 sep 2021» գրառումներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ վարույթով պատասխանողի կողմից ներկայացված տվյալները և տեղեկությունները գործում հակառակի վերաբերյալ ապացույցների բացակայության պայմաններում Հանձնաժողովի կողմից ընդունվում են որպես հավաստի: Ընդ որում, Հանձնաժողով կեղծ տվյալներ և տեղեկություններ ներկայացնելու համար վարույթով պատասխանողը կրում է պատասխանատվություն:

Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության ներկայացրած՝ «աղբյուրի ջուր» մակնշումով ապրանք արտադրած և իրացրած չլինելու վերաբերյալ տեղեկությունների հակառակի վերաբերյալ գործում առկա միակ տեղեկությունը ՊԵԿ-ի տրամադրած հաշվարկային փաստաթղթերում արտացոլված տեղեկությունն է, ինչը տվյալ դեպքում չի կարող դիտվել բավարար հերքելու համար Ընկերության վկայակոչած՝ «աղբյուրի ջուր» մակնշումով ապրանք արտադրած և իրացրած

չլինելու փաստը, քանի որ ապրանքների մատակարարման կամ ձեռքբերման դեպքում ՀՀ հարկային օրենսդրությունը չի նախատեսում ապրանքային դիրքի լրացման պահանջ:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի շրջանակներում չի հաստատվել Ընկերության կողմից «աղբյուրի ջուր» մակնշումով, մասնավորապես, «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված» և «Ջուր Բյուրական աղբյուրի շալցված սպորտ» ապրանքների իրացման փաստը, հետևաբար բացակայում է դրանց իրացմամբ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության խախտման դեպքը:

Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման, եթե առկա է վարույթի հարուցումը մերժելու որևէ հիմք:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, եթե բացակայում է խախտման դեպքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ թիվ ՀԳ-00047/22 վարույթը ենթակա է կարճման՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության խախտման դեպքի բացակայության հիմքով:

7. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարճել թիվ ՀԳ-00047/22 վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Կառույ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թ. հունիսի 7

Երևան